

Մ Ե Ն Ա Ս Տ Ա Ն Ի Ն Կ Ո Յ Ս Ը

ՀՍՏ ՍԻՊԻԼԻ (Զ. ԱՍՏՏՈՒՐ)

Կէս գիշեր է. սենեակիս մէջ միայնակ՝
Կանթեղ չունիմ, ոչ ալ երկինքն ունի շող.
Իր լոյսն յետին մարեց դարպասն ու տընակ,
Եւ մընացի իմ խոհերուս հետ մաշող:

Կը թափառին շուրջս ըստուերներ թանձրահոծ,
Մերձենալով հեռանալով յամրաբար,
Եւ կը լըսեմ իրենց վայելն ողբակոծ,
Երբ կանգ առնել կու գան յոգնած ու մոլար:

Տըխուր մտքիս ուրուականներն են համակ,
Յընորդ հոգւոյս հազիւ հասած արբուքի,
Եւ մինչ կ'անցնին օրերըս ցուրտ ու ցամաք՝
Անոնք կու տան ինձ ըստփանքն արցունքի:

Զի մինակ եմ հոս դէմքերու հետ տրտում,
Կոյսերու հետ, որոնք չունին իղձ ու խանդ,
Որոնց ձայնին վանկերն՝ աղօթք անպատում՝
Կը խորտակեն երազս ու յոյս մանաւանդ:

Ապրիլ կ'ուզեմ. անոնք երկինք ցոյց կու տան.
Սիրելի կ'ըզմամ. կը գոչեն. «Սէր է Աստուած».
Եւ կը պատմեն Ղաւիթը, Յոբն ու Յուդան.
Կ'ըսեն. «Միայն մահուան համար ենք հաստուած»:

Զոր կը վառէ երկինք արեւն ու լուսին,
Զօնելով կեանք ծաղկին, դաշտին ու մարդուն,
Ես կը դառնամ նորէն համեստ այն լոյսին
Որուն ներքեւ լուռ կը հըսկէ աչք մ'արթուն:

Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տաք,
Որ խառնուի տենդոտ հոգւոյս յորձանքին,
Եւ Սաղմոս մը կը դընեն, անհ, բարձիս տակ,
Խաչ մ'ալ փայտէ ընդդէմ սրտի փորձանքին:

Այդ փորձանքներն ես կ'երագեմ անդադար,
Կեանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մէջ չընչին բաժինս իմ արդար,
Եւ կը թողում երկինքն իրեն սուրբերուն:

ՀՍՏ Բ. ԵԼՊԻՍ ԿԱՊՐԱՇԵԱՆԻ

Ինչպէս թըռչնիկ ընդելացած փականքին՝
Երգէ հեշտիւ գիւր դայլայլիկ խնդագին.
Տէր, տուր գերեզմանս աստ կամաւոր բանտարգել
Սուրբ վայելքներն, զերանութիւն իւր երգել:

Թէպէտ հեռի՛... թողի ծընողք սիրասուն,
Անձնիշխան կեանք, սէր, հայրենիք, գոյք և տուն.
Բայց դու, Աստուած, սըրտիս բաժին երկնածիր,
Քեզմով եւեթ զամէնն ինձի դարձուցիր:

Օթեւանէս երանաւէտ, խաղաղիկ,
Տեսնեմ զաշխարհ ըմբոստ ալեաց խաղալիկ,
Ուր մահացուք անվերջ մրցմամբ կը յուզին,
Եւ մըշտածուփ իյնան, կանգնին և սուզին:

Իսկ թէ ի վեր աչկունքս դառնան... յոյս անուշ՝
Երկնից կապոյտ պատռէ մատամբ իր քնքուշ.
Հոն նըշմարեմ ինձ պահուած փառք մեծափառ,
Խինդ մըշտատեւ, սիրոյ աղբիւր անըստառ:

Սիրել սիրուի՛... ո՛հ ըմբռնեմ զայս գաղտնիք,
Որով միայն սիրող սիրտք են երջանիկ.
Եւ դու, ո՛ հէր, չէս սիրոյ նիւթ անըման,
Կեզրոն բարեաց, գեղեցկութիւն անսահման:

Յանհունըս թող սըրտիս բոցեր ընդլայնին,
Զի բաժին ինձ ընտրած եմ սէր Անհունին.
Թող հուր, թող բոց զիս խոշտանգեն վիշտք համայն,
Ժըպիտ են ինձ, սընունդ սիրոյս, փառք միայն:

Այո՛, ո՛ հէր, թող ըլլամ աստ ողջակէզ,
Երբեակ զօղիւքս անքակտելի յարիմ քեզ.
Փառքիդ շուքին ներքեւ պարծիմ իբր ըստրուկ,
Թող ըստառիմ տաճարիդ մէջ գերդ կընդրուկ:

Եւ երբ աշխարհ իր Արարչին յանդըզնի
Ատել զանուն, ըլլալ շանթիցն արժանի,
Ո՛հ, զոհէ զիս, անուանդ ահեղ նախատուած,
Փըրկէ զաշխարհ, փըրկէ մարդիկ, ո՛ Աստուած:

ՍՈՒՆԱԿԻՆ ԵՐԳԸ

ՈՒՂԵՐԶ

Առ Ամենապատիւ Գերերջանիկ Տէր
Տէր Ստեփանոս-Պետրոս Ժ. Ազարեան
Կարողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ

Եւ քաղցրոյն երգ սոխակին
Շառոց մէջէն նսեմաստուեր
Խորհրդաւոր լուռ պուրակին
Սուր և ըմբոստ սլանար վեր:

Հազիւ մարէր ան վերնագոյն
Խաւերուն մէջ թեթեւ կապոյտ,
Գեղեցիկ մ'ալ նոր հասնէր իսկոյն
Կցուիլ երգին ոլորտապտոյտ:

Այնպէս որ յար փոփոխակի
Սարքեն հանդէս մը դիւթական,
Զարմանահիւս երգք սոխակի
Սուրբ խրախճանք սրտի մարդկան:

Երբ հանդէսին սիրահաւէր
Ալեաց միջեւ եթերային,
Քաղցր հիացմամբ սիրտք արշաւէր,
Զիս դղրդեց խորհուրդ մ'ուժգին:

Եւ ցանկացայ վայրկենին այն
Փոխ առնել ինձ այն վեհ շէտեր,
Ու մէկ սոյլով անուշ երկայն
Երգել անդու, Վեհափառ Տէր,

Անուանդ փառքեր, հոգւոյդ գորով,
Զիրքերդ ազնիւ գերմարդկային,
Կամ այն թրթռուն յանգրգնեցող
Երգել Անունդ ապագային:

Սակայն միթէ աւելի հեշտ
Քան անբարբառ երգն անմահ
Զէն մեր լեզուին վանկերն ու շէտ,
Սիրող սրտիս գողտրիկ թարգման:

Ուստի գոչեմ ես խնդագին.
Ո՛հ Վեհաշուք Տէր իմ և Հայր,
Դու փառք սրտիս, վայելք անգին,
Ապրէ անդորր, ընդ ամս յամայր:

Դու Հայր ազգին, բայց մանաւանդ
Ինձ պէս որբին անպատասպար.
Հայր, ոյր սրտին գոթ արգաւանդ
Բխի, հոսի միշտ, անսպառ:

Եւ բաբախուն բիւր սրտից քնար
Վճիտ լարերով նրբին վէտ վէտ
Եղանակաւ նորահնար
Պիտի կրկնեն իմ երգս յաւէտ:
1897 Նոյեմբեր

ԻՂԶՆ ԻՄ ԱՌ ՄԱՐԻԱՄ ԿՈՅՍ

[Փայլ]

Մարիամ, Կոյս Սուրբ, հովտաց շուշան ձիւնա-
Որ կը ցրուէ մութ աշխարհիս մէջն ու մոայլ,
Եւ էութիւնդ անբիծ, վսեմ, համակ լոյս,
Այս ափանց վրայ կը սփռէ բոյր, սէր և յոյս:

Այնչափ մեծ ես և հզօր, Կոյս երկնագեղ,
Որ Աստուծոյ ցատուսն արդար և ահեղ [Թեան,
Կ'իջնայ իսկոյն՝ երբ մեղսապարտ մարդկու-
Տեսնէ զքեզ պաղատագին փաստաբան:

Եւ անսկիզբ, անծայրածիր, Բանն անհուն,
Ստեղծողն ինք տիեզերքի և մարդուն,
Աստուածափայլ գեղեցկութեանդ հիւանայ
Ու կուսական արգանգիդ մէջ յղանայ:

Այնուհետեւ որչափ դարեր հոլովին,
Արքայազունք և հանճարներ խմբովին
Կանգնեն Անուանդ պայծառագեղ, լուսասփիւռ
Տաճարներ ձոյլ ոսկի, գմբուխտ և պորփիր:

Բայց այս ամէնն ի՞նչ են արդեօք, ո՛հ, ոչինչ,
Իղձերուս քով և Պատկերիդ սուրբ և շինչ:
— Կ'ուզեմ ես որ մարդիկ և հոյժք երկնային,
Փոփոխակի քեզ «Երանի» կարգային:

Կ'ուզեմ խել ամէն սրտերն զգայուն,
Մարգաց դալարն, յասմիկն ու վարդ օրն ի բուն,
Զօնել քեզ, Մայր Անարատ, Կոյս գեղանի,
Ամէն բարեաց ո՛վ Գանձարան կենդանի:

Կ'ուզեմ տեսնել, բեւեռներէն մէկէն միւս
Զքնաղ Անունդ ընդելուզեալ ոսկեհիւս.
Եւ անդադար արշալոյսէ արշալոյս
Նոր մեղեդի յերկրել Մօրդ Աստուծոյս:

Կ'ուզեմ դարձեալ արեւելքէն արեւմուտ,
Կտրել անցնիլ ցամաքն ու ծով յորձանուտ,
Տեսնել բոլոր ոխերն ու քէն խորտակուած,
Տեսնել զաշխարհ Կուսիդ սիրով համակուած:

1898 Մայիս